

ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

*որտեղ Կենդան և Փոքրիկ Ռուն գալիս են անտառ,
և Խոզուկը լողանք է ընդունում*

ՈՉ ՈՔ ՉԳԻՏԵՐ, թե նրանք որտեղից էին եկել, բայց նրանք անտառում էին՝ Կենդան ու Փոքրիկ Ռուն: Երբ Փուն հարցրեց Քրիսթոֆեր Ռոբինին՝ նրանք այստեղ ինչպես հայտնվեցին, Քրիսթոֆեր Ռոբինն ասաց, ինչպես բոլորը, դե՛ գիտես՝ ինչ նկատի ունեմ: Իսկ Փուն, որ բոլորովին էլ չգիտեր, թե նա ինչ նկատի ուներ, ասաց՝ ճի: Ապա երկու անգամ գլխով արեց ու հարցրեց՝ ինչպես բոլորը, հա՛: Հետո գնաց իր ընկերոջ՝ Խոզուկի մոտ՝ պարզելու, թե նա ինչ է մտածում այս ամենի մասին: Խոզուկի տանը նա հանդիպեց Ճագարին: Եվ նրանք երեքով սկսեցին զրուցել:

— Այս պատմության մեջ մի բան դուրս չի գալիս, — ասաց Ճագարը: — Մեզ համար ապրում էինք դու՛ Փու՛ և դու՛ Խոզու՛կ և ես, ու մեկ էլ՝ որտեղից որտեղ...


— Բա Իյո՞րը, — ասաց Փուն:

— Եվ Իյորը, ու մեկ էլ՝ որտեղից որտեղ...

— Եվ Բուն, — ասաց Արջուկը:

— Եվ Բուն, ու մեկ էլ՝ որտեղից որտեղ...

— Քիչ էր մնում՝ Իյորին մոռանալիս, — նորից ընդհատեց Փուն:



— Ահա մեզ համար ապրում էինք, — դանդաղ ու հատ-հատ
ասաց ճագարը, — մենք՝ բո-լո-րըս, հետո հանկարծ մի օր
արթնանում ենք ու ինչ տեսնում: Տեսնում ենք մեր շարքերում
մի տարօրինակ կենդանի. կենդանի, որի մասին անգամ չէինք
լսել. կենդանի, որ իր ընտանիքը գրպանը դրած է պահում:
Ասենք, ես էլ որոշեի իմ ընտանիքը գրպանումս պահել, քանի
գրպան պետք կլիներ:

— Տասնվեց, — ասաց Խոզուկը:

— Ավելի ճիշտ՝ տասնյոթ, — ասաց Ճագարը, — մեկն էլ, որ թաշկինակս դնեմ, եղավ տասնութ: Տասնութ գրպան մի կոստյումի վրա: Ինձ որտեղից այդքան ժամանակ:

Նրանք երկար լռեցին ու ստրերի մեջ ընկան... Հետո Փուն, որը մի քանի րոպե շարունակ խոժոռված նստել էր, ասաց.

— Իմ հաշվելով՝ տասնհինգ:

— Ինչ, — ասաց Ճագարը:

— Տասնհինգ:

— Տասնհինգ ինչ:

— Քո ընտանիքի անդամները:

— Ընտանիքիս անդամներն ինչ:

Փուն քիթը տրորեց. իրեն թվացել էր, թե Ճագարն իր ձագերի մասին է խոսում:

— Իսկապես, — անփույթ ասաց Ճագարը:

— Հա՛, դու ասում էիր, որ...

— Լավ, կարևոր չէ, Փո՛ւ, — անհամբեր ասաց Խոզուկը: — Հարցն այն է, թե ինչ ենք անելու Կենգայի հետ:

— Հասկացա, — ասաց Փուն:

— Լավագույն բանը, որ կարող ենք անել, — ասաց Ճագարը, — Փոքրիկ Ռուին գողանալն ու թաքցնելն է: Հետո, երբ Կենգան ասի՝ ուր է Փոքրիկ Ռուն, մենք կասենք՝ *ահա՛*:

— *Ահա*, — ասաց Փուն՝ նախապես փորձելով՝ *ահա՛, ահա՛*... Դե՛ իհարկե, — շարունակեց նա, — իսկ միթե առանց Փոքրիկ Ռուին գողանալու չէինք կարող *ահա* ասել:

— Փո՛ւ, — ասաց Ճագարն առանց չարությամբ, — դու ընդհանրապես խելք չունես:

— Գիտեմ, — խելոք համաձայնեց Փուն:

— Մենք կասենք՝ *ահա*, և Կենգան կհասկանա, որ մենք գիտենք Փոքրիկ Ռուի տեղը: *Ահա*՝ նշանակում է՝ մենք քեզ կասենք՝ որտեղ է Փոքրիկ Ռուն, եթե խոստանաս մեր անտառից հեռանալ ու այլևս չվերադառնալ: Եվ մի՛ խոսիր, երբ ես մտածում եմ:


Փուն քաշվեց մի անկյուն ու փորձեց *ահա* ասել այնպես, ինչպես իրեն բացատրել էին: Երբեմն նրան թվում էր, որ *ահա* իսկապես նշանակում էր այն, ինչ ճագարը հենց նոր ասել էր, իսկ երբեմն էլ սիրտը կասկած էր ընկնում: «Երևի ուղղակի պարապում եմք,— մտածեց նա,— տեսնես Կենդան էլ պիտի պարապի, որ հասկանա՝ ինչ ենք ասում»:

— Մի բան էլ կա,— ասաց Խոզուկը՝ մի փոքր հուզված,— երբ ես Քրիսթոֆեր Ռոբինի հետ էի խոսում, նա ասաց, որ Կենդան կատաղի գազան է համարվում: Սովորաբար ես կատաղի գազաններից չեմ վախենում, բայց հայտնի բան է, երբ նրանց ձագին տանում են, նրանք երկու կատաղի գազանի չափ են կատաղում, այնպես որ այս պարագայում Կենդային *ահա* ասելն ուղղակի անխելքություն է:

— Խոզուկ,— ասաց ճագարը՝ մի մատիտ վերցնելով ու մատիտի քիթը լեզվով թրջելով,— մեջդ հեչ քաջություն չկա:

— Քաջ լինելը շատ դժվար բան է,— թեթևակի ֆսֆսացնելով ասաց Խոզուկը,— եթե դու շատ փոքրիկ գազան ես:

Ճագարը, որ ինքնամոռաց ինչ-որ բան էր գրում, նայեց Խոզուկին ու ասաց.



— Մեր գործուն դու չափազանց օգտակար ես հենց այն բանի շնորհիվ, որ շատ փոքրիկ գազան ես:

Խոզուկն օգտակար լինելու մտքից այնպես ոգևորվեց, որ վախի մասին մոռացավ: Իսկ երբ ճագարն ասաց, որ Կենդան գազազուն է միայն ձմռանը, իսկ տարվա մնացած ամիսներին շատ բարեսիրտ արարած է, նա այլևս չկարողացավ տևողում հանգիստ նստել. այնքան էր ուզում օգտակար լինել:

— Բա էս,— տխուր ասաց Փուն,— ես դժվար օգտակար լինեմ, հմ:

— Բան չկա, Փո՛ւ,— սիրտ տվեց Խոզուկը,— դու էլ՝ մի ուրիշ անգամ:

— Առանց Փուի,— մատիտը սրելով՝ ծանրումեծ ասաց Ճագարը,— այս գործն ընդհանրապես գլուխ չի գա:

— Օ՛հ,— ասաց Խոզուկը,— փորձելով թաքցնել իր հիասթափությունը: Իսկ Փուն գնաց կանգնեց սենյակի մի անկյունում ու հպարտ-հպարտ ինքն իրեն ասաց. «Առանց ինձ գործը գլուխ չի գա: Ահա այդպե՛ս»:


— Բոլորդ ի՛նձ լսեք,— ասաց Ճագարը, երբ գրեց վերջացրեց: Փուն ու Խոզուկը նստեցին ու բերանները բաց՝ սկսեցին անհամբերությամբ լսել:

Ճագարը բարձրաձայն կարդաց.

ՓՈՔՐԻԿ ՌՈՒԻՆ ՓԱԽՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

1. *Ընդհանուր նկարատումներ:* Կենդան մեզանից արագ է վազում՝ անգամ ինձանից:

2. *Ավելի ընդհանուր նկարատումներ:* Կենդան երբեք աչքը Ռուից չի կտրում, եթե, իհարկե, Ռուն նրա գրպանում հուսալի կոճկված չէ:



3. *Հնրևարար*: Եթե ուզում ենք Ռուին փախցնել, պետք է Կենգայից շատ հեռանանք, որովհետև նա բոլորիցս արագ է վազում՝ անգամ ինձանից (տե՛ս կետ 1):

4. *Այսպիսի միտք*: Եթե Ռուն Կենգայի գրպանից դուրս ցատկի, և Խոզուկը նրա տեղը թռչի, Կենգան տարբերությունը չի նկատի, որովհետև Խոզուկը շատ փոքրիկ գազան է:

5. Նա նման է Ռուին:

6. Կենգան պետք է ուրիշ կողմ նայի, որ չտեսնի՝ ինչպես է Խոզուկը նրա պարկը թռչում:

7. Տե՛ս կետ 2:

8. *Եվս մի միտք*: Եթե Փուն նրա հետ ոգևորված խոսի, Կենգան կարող է մի պահ Ռուին սոռանալ:

9. Եվ այդ ժամանակ ես կկարողանամ Ռուի հետ փախչել:

10. Արագ:

11. Եվ Կենգան ահագին ժամանակ տարբերությունը չի նկատի:

Ճագարն իր գրածը հպարտ կարդաց: Երբ կարդաց վերջացրեց, միառժամանակ ոչ ոք ոչինչ չասաց: Իսկ Խոզուկը, որը բերանը լուռ բացուխուփ էր անում, վերջապես խոպոտ ձայնով ասաց.

— Իսկ... հետո՞:

— Հետո ի՞նչ:

— Հետո, երբ Կենգան տեսնի, որ պարկի մեջ ոչ թե Ռուն է, այլ ես:

— Այդ ժամանակ էլ բոլորս միասին կասենք՝ *ահա՛*:

— Երեքս միասին:

— Հա՛:

— Օ՛հ:

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, Խոզուկ:

— Հե՛ջ,— ասաց Խոզուկը,— եթե երեքս միասին ենք ասելու... Եթե միասին ենք ասելու՝ *ահա*, ոչինչ, բայց չէի ուզենա մենակ ասել: Հեջ լավ չէր լինի: Ի դեպ, վստահ եք,



որ այն, ինչ ասացիր
ձմռան ամիսների
մասին, ճիշտ է:

— Ինչ ամիս:

— Դե որ միայն
ձմռան ամիսներին են
կատաղում:

— Չմտածե՛ս, այդ-
պես է, որ կա: Փո՛ւ, քեզ հա-

մար պա՛րզ է՝ ինչ ես անելու:

— Չէ՛, — ասաց Փուն, — այնքան էլ չէ: Իսկ ինչ եմ անելու:

— Պետք է խոսեցնես Կենգային, որ ոչինչ չնկատի:

— Օ՛հ, իսկ ինչի՞ մասին:

— Ինչի մասին՝ ուզում ես:

— Ոտանավորներից խոսե՛մ հետք:

— Շատ լավ ես մտածել, — ասաց Ճագարը, — հրաշալի է:

Դե՛, գնացի՛նք:

Եվ նրանք դուրս եկան՝ Կենգային փնտրելու:

Կենգան և Ռուն անտառի ավազուտում խաղաղ երեկոն էին վայելում:

Ռուն փորձում էր փոքրիկ ցատկեր գործել ավազի վրա, ընկնում էր մկնարներն ու դուրս մագլցում, Կենգան էլ իրար անցած մի գլուխ կրկնում էր. «Մի հատ էլ ցատկիր, սիրելիս, մի վերջին անգամ էլ, ու տուն գնանք»: Հենց այդ պահին բլրալանջին երևաց Փուն:

— Բարի օր, Կենգա:

— Բարի օր, Փո՛ւ:

— Տե՛ս՝ ինչպես եմ ցատկում, — ծղրտաց Ռուն ու ընկավ մեկ ուրիշ մկնարնի մեջ:

— Ողջո՛յն, Փոքրի՛կ Ռու:

— Մենք արդեն տուն էինք գնում, — ասաց Կենգան: — Բարի օր, Ճագար, բարի օր, Խոզո՛ւկ:

Ճագարն ու Խոզուկը, որ մոտեցել էին բլրի մյուս կողմից, պատասխանեցին՝ բարի օր և ողջույն, Ռո՛ւ, և Ռո՛ւն նրանց էլ խնդրեց, որ նայեն՝ ինքն ինչպես է ցատկում: Նրանք էլ մնացին ու նայեցին: Կենդան նույնպես նայեց:

— Կեն՛գա,— ասաց Փո՛ւն,— երբ ճագարն արդեն երկրորդ անգամ էր աչքով անում,— չգիտեմ՝ բանաստեղծություններով հետաքրքրվո՞ւ ես:

— Այնքան էլ չէ,— ասաց Կեն՛գան:

— Օ՛հ,— ասաց Փո՛ւն:

— Ռո՛ւ, սիրելի՛ս, մի անգամ էլ ցատկիր, ու տուն գնացի՛նք:

Մի քիչ լուռ կանգնեցին: Ռո՛ւն նորից ընկավ սկնարնի մեջ:

— Սկսի՛ր,— ասաց ճագարը՝ բերանը թաթով փակած, *բարձր շնչալով*:

— Գիտե՛ս,— ասաց Փո՛ւն,— երբ այստեղ էի գալիս, ճանապարհին մի լավ ոտանավոր հորինեցի: Ա՛յ, լսի՛ր... Ո՞նց էր...

— Ընտիր ոտանավոր է,— ասաց Կեն՛գան:— Ռո՛ւ, սիրելի՛ս....

— Քեզ այս ոտանավորը դուր կգա,— ասաց ճագարը:

— Հաստատ դուր կգա,— ավելացրեց Խոզուկը:

— Միայն ուշադիր լսի՛ր,— ասաց ճագարը:

— Որ ոչ մի բան բաց չթողնես,— ասաց Խոզուկը:

— Լավ,— համաձայնեց Կեն՛գան՝ հայացքը Ռո՛ւից չկտրելով:

— Ո՞նց էր, Փո՛ւ,— ասաց ճագարը:

Փո՛ւն թեթևակի հագաց ու սկսեց:

ՏՈՂԵՐ՝ ԳՐՎԱԾ ԽԵԼՔԻ ՏՈՊՐԱԿ ԱՐՋՈՒԿԻ ԿՈՂՄԻՑ

Երկուշաբթի հենց արևն է դուրս գալիս,
Վինի արջին մտքերն հանգիստ չեն տալիս.

Դուր ինձ ասե՛ր՝ ինչո՞ւ և կամ էլ ինչպե՛ս
Այդ «իբրևր» իրեն կարծում է «որպես»:

Երկրորդ օրը բուք է, ձյուն,
Տանջրվում են ապարդյուն,
Մտածելով օրնիրուն,
«Դրանք», «սրանք» բանն են նույն:

Երրորդ օրը երկինքըն է կապուտակ,
Ես էլ ունեմ ինչքան ասես ժամանակ,
Դրա համար կրկնում են շարունակ,
Ասե՛ք՝ ինչո՞ւ «ինչըն» է «ովի» տեղակ:

Չորրորդ օրը ուժեղ քամի է փչում,
Եղյանը ծառի ճյուղերն է գրկում,
Ես տաք բուխարու կողքին են նստում,
Անվերջ ստածում, բան չեն հասկանում:

Ուրբաթ օրը...

— Շատ լավն է,— ասաց Կենգան՝ չսպասելով, որ իմանա՝
ինչ էր տեղի ունենում ուրբաթ օրը:

— Մի անգամ էլ ցատկիր, Ռո՛ւ, և իսկապես արդեն մեր գնալու
ժամանակն է:

Ճագարն արնունկով հրեց Փուին, որ սա արագացնի:

— Քանի պոեզիայից ենք խոսում,— վրա տվեց Փուն,— ա՛յ
այն ծառը տեսե՛լ ես:

— Ո՞ր ծառը,— ասաց Կենգան,— Դե՛, Ռո՛ւ...

— Ա՛յ, այն մեկը,— ասաց Փուն՝ ցույց տալով ինչ-որ տեղ՝
Կենգայի թիկունքում:

— Չէ՛, չեն տեսել,— ասաց Կեն-
գան,— թո՛ղ պարկդ, Ռո՛ւ, սի-
րելի՛ս, տուն ենք գնում:

— Ուրեմն, նայի՛ր ա՛յ
այն ծառին,— ասաց Ճա-
գարը:— Քեզ գրկեմ, որ
ստնես պարկդ, Ռո՛ւ:



Եվ նա Ռուին իր թաթերով գրկեց:

— Այստեղից ոնց որ թռչուն է երևում, թե՛ ձուկ է,—
հարցրեց Փուն:

— Չուկ չէ, թռչուն է,— ասաց Խոզուկը:

— Իսկապես թռչուն է,— հաստատեց Ճագարը:

— Տեսնես սարյակ է, թե՛ կեռնեխ,— ասաց Փուն:

— Հարցն էլ հենց դա է,— ասաց Ճագարը:

Վերջապես Կենգան գլուխը շրջեց, որ նայի, և Ճագարը
բարձրաձայն ասաց.

— Թռիր պարկդ, Ռոն:

Եվ նրա փոխարեն Խոզուկը թռավ Կենգայի պարկը, իսկ
Ճագարը, Ռուին գրկած, ոտքերում ինչքան ուժ կար, սլացավ:

— Ճագարն ինչ եղավ,— շրջվելով՝ հարցրեց Կենգան,—
Ռոն, սիրելիս, լավ ես:

Խոզուկը Կենգայի պարկի միջից Ռուի հանած ձայներից
արձակեց:

— Ճագարը ստիպված եղավ լքել մեզ,— ասաց Փուն,—
երևի հանկարծ հիշեց, որ շտապ գործ ուներ:

— Իսկ Խոզուկը:

— Կարծում եմ՝ Խոզուկն էլ հանկարծ ինչ-որ բան հիշեց:

— Դե՛ լավ,— ասաց Կենգան,— մենք պետք է տուն գնանք:

Ցտեսություն, Փոն:

Եվ երեք մեծ ցատկերով Կենգան հեռացավ:

Փուն նայեց նրա հետևից:

— Երանի ես էլ կարողանայի նրա նման ցատկել,— մտա-
ծեց Արջուկը,— ով կարող է, ով էլ՝ չէ: Աշխարհիս բանն է
այդպես:

Սակայն, եղան պահեր, երբ Խոզուկը շատ կուզենար, որ
Կենգան չկարողանար այդպես ցատկել: Հաճախ անտառով
երկար ճանապարհ անցնելիս ինքն էլ ցանկացել էր թռչուն
լինել, իսկ հիմա, Կենգայի պարկի հատակին նստած, վեր ու
վար նետվելով, մտածում էր.

«Եթե սա է թռչելը,
երբեք չեմ ուզենա
թռչուն լինել»:



Եվ երբ վեր էր թռչում, գոչում էր՝ օ, իսկ երբ նորից վայր էր իջնում, ասում էր՝ օոն: Այսպես, անբողջ ճանապարհին՝ մինչև Կենդանի տուն հասնելը, Խոզուկը «Օ-օն, օ-օն» էր կանչում:

Պարզ է՝ հենց Կենդան պարկի կոճակներն արձակեց, տեսավ, թե ինչ էր պատահել: Մի պահ նրան թվաց, որ ինքը վախեցավ, բայց հետո հասկացավ, որ չի վախեցել: Վստահ էր՝ Քրիսթոֆեր Ռոբինը երբեք թույլ չէր տա, որ Ռոբին որևէ վատ բան պատահի: Այնպես որ, Կենդան ինքն իրեն ասաց. «Եթե նրանք ինձ հետ կատակ են անում, ես էլ նրանց հետ կկատակեմ»:

— Իսկ հիմա, Ռոն, սիրելիս,— ասաց Կենդան՝ Խոզուկին պարկից հանելով,— քնելու ժամանակն է:

— *Ահաի*,— ասաց Խոզուկը, որքան որ կարող էր ձայն հանել իր սոսկալի ճանփորդությունից հետո: Բայց *ահան* այնքան էլ հաջող չստացվեց, և Կենդան կարծես չհասկացավ, թե *ահան* ինչ էր նշանակում:

— Նախ պետք է լողանանք,— զվարթ ձայնով ասաց Կենդան:

— *Ահաի*,— նորից ասաց Խոզուկը՝ անհանգիստ շուրջը նայելով, որ ընկերներին գտնի: Բայց նրանք այդտեղ չէին: Ճագարը



իր տանը խաղում էր Ռոնի հետ ու գնալով ավելի ու ավելի մտերմանում փոքրիկի հետ, իսկ Փուն, որ որոշել էր Կենգա դառնալ, Հարյուր ակրանոց անտառի բլրի ավազների վրա նոր սովորած ցատկերն էր մշակում:



— Վստահ չեմ,— մտածկոտ ասաց Կենգան,— բայց գուցե լավ կլիներ այսօր սառը ջրով լողանայինք, ինչ կասես, Ռոնի, սիրելիս: Խոզուկը, որ լողանալ առանձնապես չէր սիրում, նեղսրտած դողացրեց և, որքան կարող էր համարձակ, ասաց:

— Կենգա, տեսնում եմ, ժամանակն է, որ պարզ խոսենք:

— Ինչ ծիծաղելի բաներ ես ասում, Փոքրիկ Ռոնի,— ասաց Կենգան, որ արդեն լոգանքի պատրաստություն էր տեսել:

— Ես Ռոնն չեմ,— բարձր ասաց Խոզուկը,— ես Խոզուկն եմ:

— Հա՛, հա՛, սիրելիս,— փաղաքուշ ձայնով ասաց Կենգան:— Ինչ լավ ես Խոզուկի ձայնը նմանակում, իսկո՞քս,— շարունակեց նա և պահարանից մի մեծ կտոր դեղին օճառ հանեց:

— Իսկ հիմա ինչ ենք անելու:

— Չե՛ս տեսնում,— գոռաց Խոզուկը,— աչքեր չունե՛ս, ինչ է: Մի ինձ նայիր:

— Նայում եմ, Ռոնի, սիրելիս,— արդեն խիստ ձայնով ասաց Կենգան,— դեռ երեկ քեզ ասացի, որ չի կարելի ծանածոություններ անել: Եթե դեմքդ Խոզուկի նման ծռնես,

վերջում իրոք Խոզուկ կդառնա: Մտածիր՝ ինչպես ես գղջա-
լու: Դե՛, մտիր տաշտակը և այնպես չանես, որ այդ մասին
նորից խոսենք:

Նախքան կհասցնեք հասկանալ՝ ինչն ինչոց է, Խոզուկը
հայտնվեց տաշտի մեջ, իսկ Կենգան օճառած ճիլոպով սկսեց
նրա դեմքը ամուր-ամուր տրորել:

— Օ՛հ,— գոռաց Խոզուկը,— բաց թող: Ես Խո-
զուկն եմ:

— Բերանդ փակ պահիր, թանկագինս,
թե չէ օճառ կլցվի,— ասաց Կեն-
գան,— ինչ էի ասում, խնդրեմ:

— Դու... Դու... դիտմամբ արե-
ցիր,— վլվլացրեց Խոզուկը, հենց
նորից կարողացավ խոսել... Ու
հենց այդ պահին պատահաբար էլի մի բերան օճառած ճի-
լոպ համտեսեց:

— Ճիշտ է, սիրելիս, ոչ մի բան մի՛ ասա,— խնդրեց Կենգան:
Եվս մեկ բուպե, և նա Խոզուկին ջրից դուրս հանեց ու սկսեց
սրբիչով չորացնել:

— Իսկ հիմա,— ասաց Կենգան,— դե՛ղդ խմիր և ուղիղ՝ ան-
կողին:

— Ի-ի-ի-ինչ դեղ,— կմկմաց Խոզուկը:

— Դե՛ղդ խմիր, որ ուժեղ ու մեծ կենգուրու դառնաս, սիրե-
լիս: Դու հո չես ուզում Խոզուկի նման լղար ու թույլ լինել, չէ՛:

Հենց այդ պահին դուռը ծեծեցին:

— Մտե՛ք,— ասաց Կենգան:

Ներս մտավ Քրիսթոֆեր Ռոբինը:

— Քրիսթոֆեր Ռո՛բին, Քրիսթոֆեր Ռո՛բին,— քղավեց Խո-
զուկը,— ասա՛ Կենգային՝ ես ով եմ: Անընդհատ ինձ Ռու է
ասում: Ես Ռուն չեմ, չէ՛:

Քրիսթոֆեր Ռոբինն ուշադիր նայեց Խոզուկին ու գլուխը
թափահարեց:





— Չէ՛, դու չես կարող Ռուին լինել, որովհետև
ես հենց նոր տեսա Ռուին. ճագարի տանը
խաղում էր:

— Ահա թե ինչ, — զարնացավ Կենգան, — միայն
մտածե՛ք, ինչպե՛ս կարող էի այդպես սխալվել:

— Բա որ ասում էի, — գոչեց Խոզուկը, — ես
ասում էի թե՛գ՝ ես Խոզուկն եմ:

Քրիսթոֆեր Ռոբինը նորից թափահարեց
գլուխը:

— Չէ՛, դու Խոզուկը չես, — ասաց նա, — ես ճանա-
չում եմ Խոզուկին: Նա բոլորովին ուրիշ գույն ունի:

Խոզուկը սկսեց բացատրել, որ ինքն այդ գույն էր դարձել,
որովհետև հենց նոր լոգանք էր ընդունել, բայց հետո գոջաց իր
արածի համար, որովհետև բերանը բացելուն պես Կենգան դեղով
լի գդալը նրա բերանը մտցրեց, հետո, մեջքին խփելով, ասաց՝
մեկ որ սովորի այդ համին, հետո արդեն դուրը շատ կգա:

— Ես գիտեի, որ սա Խոզուկը չէ, — ասաց Կենգան, — ուղ-
ղակի չէի հասկանում, թե ով է:

— Գուցե Փուի ազգականներից է, — ասաց Քրիսթոֆեր Ռո-
բինը, — ասենք, զարմիկը, քեռին կամ նման մեկը:

Կենգան հասաճայնեց, որ Արջուկի ցեղից ինչ-որ մեկն է, և
ասաց, որ հարկավոր է նրան անուն դնել:

— Ես նրա անունը Փութել կդնեմ, — ասաց Քրիսթոֆեր Ռո-
բինը, — Հենրի Փութել, որ կարճ լինի:

Որոշված էր: Խեղճ Հենրի Փութելը գալար-
վելով դուրս պրծավ Կենգայի ձեռքերից ու
ցատկեց գետնին: Հուրախություն նրա՝
Քրիսթոֆեր Ռոբինը դուռը բաց էր
թողել: Դեռ երբեք Հենրի Փութել խո-
զուկն այդպես արագ չէր վազել, և նա
շարունակեց վազել, մինչև մոտեցավ
իր տանը: Երբ ընդամենը մի հարյուր



յարդ էր մնացել մինչև տուն հասնելը, էլ չվազեց, այլ գլորվելով անցավ մնացած ճանապարհը, որպեսզի իր նախկին հաճելի գույնը վերականգնի:

Ահա այսպես Կենգան ու Ռուն մնացին անտառում: Ամեն Երեքշաբթի Փոքրիկ Ռուն խաղում էր իր ամենալավ ընկերոջ՝ Ճագարի հետ, Կենգան իր ամենալավ ընկերոջը՝ Փուին, ցատկել էր սովորեցնում, իսկ Խոզուկը ողջ օրն անցկացնում էր Քրիսթոֆեր Ռոբինի՝ իր ամենալավ ընկերոջ հետ: Եվ բոլորը նորից երջանիկ էին:

